

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10347

Franklin  
D. Roosevelt

3000  
R-78

1925

ԳՐՈՒՆՑԱՐՆԵՐ ԲՈՂՈՒ ՅՆԵԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԷՆՈՐ ԳԱՐՈՒՆԷՆԻ»



ՊԻՈՂՆԵՐԸ

ԳՅՈՒՂՈՒՄ

*Handwritten signature*  
21.25

3K107  
F-78

ԹԻՖԼԻՍ - 1925

10747

05 MAR 2013

24 SEP 2006

К-07

-78

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՆՈՐ ԳԱՐՈՒՆԻ»

1 DEC 2009

Uy

ՆԻԿՈԼՍՅ ԲՈԳԴԱՆՈՎ

# ՊԻՈՆՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

ՇԻՆԻՍ

ԹԱՐԳՄ. 2. ԽԱԶ.

19 Թ Ի Ց Լ Ի Ս 25



# ՊԻՈՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

## Լ Ը Կ Ի Ն Ո

Թրախկ—թրախկ—թրախկ: Գերաններից շինած փոքրիկ խարխուլ կամուրջի վրա այնպես ցնցվեց սայլակը, վոր նիրհած պիոնները արթնացավ:

Գորշ գարնանային յերեկոն սև շղարշով պատել է պյուղը. — վոչինչ չի յերևում, միայն այստեղ-այնտեղ պառավ խրճիթներն են թարթում իրենց կուրացած պատուհաններով, գետակն է մրմնջում ձորակում:

Գյուղի կենտրոնում յեկեղեցին է, — սպիտակ, փոքրիկ, թռչնային վտախների վրա. նրա կողքին գանգուր լուրենիների մեջ թաղված է աղայական տունը՝ խոշոր ու գորշ:

Սայլապանը սուլեց, մտրակեց. վողորմելի ձին թափահարեց իրեն, և սայլակը հառաչեց իր ձորնչացող անիվներով, թռիչքներ արավ ու սլացավ զատարկ փողոցների միջով: Վախից դուրս պրծած քոթոթները յերկար ժամանակ չեյին հանգստանում, հաջում էյին անիվների բարձրացրած փոշու մեջ:

Յեկվորներին զիմալորեց մեծ, սև, ցախավելի նման կաշա միրուքավոր Նիկիտա հորյեղբայրը:

— Ո՛, ես վոր իսկի չեյինք սպասում, իսկի չեյինք սպասում, ճիշտը, աստված վկա, չեյինք սպասում. ուրա-

խություն, են ել ինչպիսի ուրախություն, կշկշում եր հո-  
րաբույր նաստասյան, ինքնայեւր դնելով:

— Համա յերկար ես մնալու մեզ մոտ հն, այդպես  
չէ աղբեր ջան:

Ե՛հ, դեռ մինչև աշուն կմնամ, ինձ բժիշկներն ու-  
ղարկեցին, ծանր ե ողբ Մոսկվայում, տո՛թ, թորերս ել  
ենքան լավ չեն,— պատասխանեց Վասյայի հայրը: Նա Մոս-  
կվայում գմոնխտի (նաժդակի) գործարանի բանվոր եր:  
Լրկինոն, ուր յեկան նրանք, հոր ծննդավայրն եր, լավ,  
չոր տեղ եր. ահա այդ պատճառով ել հայրը վորոշել եր իր  
Նիկիտա յեղբոր մոտ անցկացնել ամառը:

Թե՛յ եյին խմում: Սենյակը լեփ լեցուն եր հարեան-  
ներով. բոլորն ել ցանկանում եյին տեսնել Վասիկի հորը,  
Մոսկովցի Միմոնին: Պատանի հասակում նա քաղաք եր  
գնացել, այդ ժամանակվանից ել չեյին տեսել նրան: Մոս-  
կվայի մասին եյին հարց ու փորձ անում, Լենինի մասին,  
— Ի՞նչպես ե, հիվանդ ե, լավանձում ե. ուրախացել եյին  
հոր բերած թերթերի համար: «Փող չունենք բաժանորդա-  
գրվելու»... ասում եյին նրանք:

— Բայց շատ փող հարկավոր չե,— հավաքական ույ-  
ժերով կարող եյիք անել այդ:

Նայում եյին բոլորը Վասյային և զարմանում նրա  
հագուստին, կարմիր փողկապին:

Ովքե՛ր են պիոներները, հասկանալ չեյին կարողանում:

— Գիտե՞ք ով ե Լենինը:

— Գիտենք:

— Դե հենց Լենինը— նույնպես պիոներ ե, միայն նա  
հին պիոներ ե, իսկ սրանք մատաղ: Իր գործի համար փոչ  
մի բանից չեր վախենում Լենինը, փոչ բանախց և փոչ ել  
տաժանակիր աշխատանքից.— այդ տեսակ մարդիկ պիոներ  
են կոչվում. ահա սրանք ել նույնպես: Մեր կոմսոմոլը—  
կուսակցականների փոխանորդն ե, իսկ սրանք մեր փոխա-  
նորդների փոխանորդն են, բացառից Վասյայի հայրը:

Հիմա ամենքն ել հասկացան:

Սոսակցությունը յերկար տևեց:

Պառկած անկողնում, Վասյան անդառար լսում եր  
այն մասին, թե ինչպես Նիկիտա հորյեղբայրը սղայի կալ-  
վածում կոմմունա յե կազմակերպում, բայց գործը դան-  
դաղ ե առաջ գնում, վորովհետև ինքը մենակ ե:

— Բոլորս ապրելու յենք պարտիզի ֆիլդելում:

— Իսկ տանն ինչ ե լինելու:

— Այնտեղ մեր կոմյերիտմիության ակումբն ե. լսում ե  
Վասյան խոսակցությունները հատ ու կտոր և քունը գլու-  
խը մտածում «սպասեցե՛ք, պիոներական ակումբ ել կլինի»:

### ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Ծագեց արևը. լուսամուտից ներս թափանցեցին վոս-  
կեղոյ ճառագայթները և արթնացրին Վասյային:

Մեկ-յերկու, պիոները պարաստ ե: Յերեսարբիչը ու-  
սին, կիսամերկ գնում ե լվացվելու:

— Վո՞րտեղ ե ձեր լվացվելու տեղը:

— Վայ, քոռանամ յես, քունը գլո՞ւխնա, ի՞նչա, վոր  
եղպես տկտրա դուրս յեկե՛ր, մտածում եր նաստա հո-  
րաբույրը:

— Պետիկ, տար ախպորդ տաշաի մոտ:

Սպիտակաչյա, սպիտակահերյերեխան թողեց մարակ  
վարդերը և գնաց Վասյայի հետ:

— Ասել ե թե՛ գու ինձ եղբայր ես գալիս:

— Յեղբայր... իսկ ինչո՞ւ յերեկ յես քեզ չաեսա:

— Գիշերը ձիաներն եյի արածեցնում:

Վասյան լվացվեց, մաքրեց ատամները, մարմինը  
շփեց սրբիչով և սկսեց մարմնամարզությամբ պարապել:  
Պետիկը զարմացած նայում եր նրա պարապմունքին:

— Ես ի՞նչ ոյիններ ե հանում... տո՛...

Վերջացնելով պիտոներական արդ ու դարդը, Վասյան առաջարկեց յեղբորը նոյնն անելու: Պետիկը ծիծաղեց:

— Մեզանում եղենց բաներ չկան, տնագ կտան...

Վասյայի առաջի գործը յեղավ՝ սենյակում մի անկյուն սարքել իր համար. Պետիկը նրա համար մի սեզան ճարեց:

Սեզանի վերեր կախեց Լենինի և Լիբկնեխտի նկարները:

Պետիկը, բերանը բաց արած՝ նայում էր Վասյայի դեղեցիկ զբքերի կույտին, գնդակին, կողմնացոյցին և ուրիշ իրերին:

— Դե, յեղբայր, այժմ գնանք. վսրտեղ ե ձեր կոմյերիտմիության բջիջը, ասաց Վասյան, յերբ վերջացրեց բուրբ:

\* \* \*

Քարտուղարն աչքերին չեր հավատում, դեռ յերբեք իրականության մեջ պիտոներ չեր տեսել, տեսել էր միայն նկարներում, իսկ այժմ, այ քեզ բան: Կարմիր փողկապ, տեսքը խիզախ, և կարճ անդրավարտիք. մի խոսքով բոլորն աշնպես, ինչպես նկարի մեջ:

— Ձեր ժողովները վճր որերն են լինում:

— Կիրակի որերը, տասներկուսին, աղումբում...

— Դե, կաց, եզ ուր ես փախչում, յես առաջին անգամն եմ պիտոներ տեսնում, իսկ նա խոսել անգամ չի ուզում:

### ՄԵԿԵՆ Ի ՄԵԿ ԳՈՐԾԻ ԿՂԱՎ

Թափթփված գերանների, խարխլած ցանկապատի մոտ յերեխաների բազմությունն է խոնված: Բզավում են, ճգավում: Թռչկոտում են մի ինչ վոր բանի շուրջը: Հարվա-

ծում են մտրակներով, սանձերով: Ծներին քսի-քսի յեն տալիս: Ծները հոգնելուց խռպոտել են, ցատկում են ու յես թռչկոտում, բերանները փրփրել ու արնոտել է:

— Այդ ինչ է, դարմացավ Վասյան:

— Այ, մտիկ տուր ինչա, վոգնի յեն բռնել, ու հիմա ել դատաստանն են տեսնում:

— Այ քեզ հիմարներ, չե՞ վոր դա ոգտակար կենդանի յե,— Հարկավոր է նրանց կանգնեցնել:

— Հենց ետե, նրանք քեզ ալանջ կանեն: Ծեկկարմիր Պետոն ա, հալբաթ, վոգնուն բռնել. շատ չարն ա, ինչ ուզում ա, են ել անում ա:

— Տղերք, այդ ինչ եք անում:

Պիտոների խիզախ, ճկուն կերպարանքը ցցվեց աղաների խայտաբղետ բազմության մեջ:

— Ոհո՛, դու վորտեղից դուրս ընկար, քո ինչ գործնա, բղավեց շեկ-կարմիր, հաստիկ աղան:

— Ախր, չե՞ վոր սա ոգտակար կենդանի յե, ո՞՞՞ ե ուտում, մկներ վոչնչացնում, իսկ դուք նրան շարչարում եք, այդ յեղամ:

— Տո՛, եզ ինչա, դու մեզ սովորցնել էս ուզում.— աղան հրեց Վասյային:

— Դեե, մի հրի:

— Ի՞նչ ա վոր...

— Քեզ ասում եմ, մի հրի:

— Իսկ յես կհրեմ...

— Հապա, համարձակվիր...

— Մի հաս հասցրու, Պետո, մի լավ դաս տուր, լրս-վեց չորս կողմից:

Պետոն շարժվեց դեպի Վասյան:

Պիտոները չկորցրեց իրեն: Բոլորը տեսան, թե ինչպես նրա ճկուն կերպարանքը լարվեց. մեկ-յերկու-և շեկ կարմիրը փովեց փափուկ փոշու մեջ:

— Ո՛յ-ո՛յ-ո՛յ, փո՛ւհ, փառավոր եր, աղմըկեցին, շըվշըվացրին նորից:

Շեկ-կարմիրը կատաղեց, փոռնաց յեզի նման, հարձակվեց ճարպիկ հակառակորդի վրա, բոռնցքները — փթանոց են:

— Ա՛խ. — նորից, ուղղակի գերանների վրա փովեց Պետոյի մարմինը: Շունչը փորն ընկավ ճարպիկ հարվածից, աչքերը բնից գուրս թռան. ել չհամարձակվեց հարձակվել:

— Արի հաշտվենք, մեկնեց Վասյան իր ձեռքը պարտաված թշնամուռն:

Տղան ձեռքը չտվեց, հեռացավ: Հեռանալիս մտածում եր, «Մա կախարդ ե, ի՛նչ ե»: Բոլորը լռեցին: Ոգավելով հանգամանքից, փոզնին փախավ:

Վասյան կախարդ չեր. նա վորպես որինակելի պիտներ պարտավում եր մարմնամարդությամբ և սպորտով:

— Համա լավ դմբղեցիր նրան, հա՛:

— Նրան եղպես ել պետքեր:

— Կատաղածնե, որ չի տալիս մեզ...

— Կուլակ ե նա, կուլակի աղան, վրա տվին աղաները: Շըջապատեցին Վասյային: Մթնոլորտը խաղաղվեց:

— Արի բարեկամ դառնանք, մոտեցավ Վասյային կարճահասակ, ամրակազմ մի աղա, լայն բաց անելով ամուր փոռքերը, — յես կուզկա Բուկն եմ:

— Յես՝ Վասյա Գլադովը:

«Այ բեզ առողջ կազմվածք», մտածեց Վասյան, նա յելով նոր բարեկամի վրա: — Ո՛, յեթե սա պարտալի մարմնամարդութեամբ և սպորտով:

Գ Ի Ծ Ե Ր — Ա Ր Ո Տ

Հոտի բարձրացրած փոշու հետ վրա հասավ և յերկրոն: Տաք, գորշ վերմակով ծածկեց գյուղը: Պատրանալով

եր և Վասյան Պետոյի հետ: Հորաքոյրը պատրաստեց ընթրիքի համար կաթնով, հետերն ել մի մի կտոր հաց դրեց. Վասյան վերցրեց ելեքտրական լապտերը, մի յերկու գիրք: — «Զրոյցներ խարոյկի մաս», վերմակ, իր ձեռնափայտը և դնացին:

Անսովոր մարդուն տարորինակ ե ձիու վրա հարվելը: Սահում ես մի կողքից մյուսի վրա ու ծիծաղում են արդերքը: Այդ բավական չե, ձիերը չափ տալու մրցումն են կատարում, եզ ժամանակ արդեն բանրդ բուրդ ե: Անցնում էյին շարունակ կանաչների մոտով, հեռոցհեռե խտանում եր կանաչը, բուրում: Լորերը կանաչների մեջ ճըթճթում էյին. — «Քնելու ժամանակ ե», «քնելու ժամանակ ե»: Կանոգ առան գետափին մոտիկ մարդագետնի վրա: Խառնեցին ձիերը իրար ու բաց թողին: Սկսեցին խարոյկ պատրաստել:

Հաճելի յե գիշերը դաշտում: — Խաղաղ ե: Լսելի չե, թե ինչպես ափի մոտ յեղինջների միջև կարկաչում ե ջուրը: Լուսինը. — դեղին պղնձե թասի նման, կախվեց կալվածատիրական պուրակի յեղենիների կատարներին, ցած, բոլորովին ցած, ուզում ես մոտենալ, քարով խրփել ու գրնդացնել:

— Հի՛մա մեր պիտներները մի վորեե տեղում նույնպես բանակ են դնում, խարոյկ վառում, յերգեր են սուռ, — բարձրաձայն խոսեց Վասյան:

— Ե՛հ յերեի բան ու գործ չունին, ասաց մեկը:

— Ուրեմն, գուք պիտներներին չեք ճանաչում, վոր ալդպես եք խոսում: Պիտներները դատարկապորաններ չեն, գուք սխալվում եք: Մենք կազմակերպվել ենք, վորպեսզի պատրաստվենք ամբողջ աշխարհի ճնշվածների կյանքի ու յերջանկութեան համար կռիվ մղելու ամեն տեսակի աղաների ու կապիտալիստների դեմ:

Այնպես համարձակ պայքարելու յենք, ինչպես մի ժամանակ Սպարտակը:



— Իսկ ո՞վ է այդ Սպարտակը:

— Սպարտակը հերոս էր: Ուզում էք յես նրա մասին կպատմեմ:

— Պատմիր, պատմիր:

— Սպարտակը, աղերք, ապրում էր սրանից հազար տարուց ել ավելի առաջ Հռոմում— մի պետութիւն, վորը նման էր մեր ցարական պետութիւն: Այնտեղ կառավարողները ազնուականներն էին՝ ամենամեծ ճնշողները: Նրանք իրենց հաճոյքների համար ստիպում էին ստրուկներին միմյանց դեմ կռուելու. գվարճութիւն էր պատճառում նրանց տեսնել, թե ով ում կսպանի...

— Տես ե, հրեշներ, բան են գտել գվարճանալու, ասաց մեծ, սպիտակախառն մազերով գլուղացին:

— Այո... այդ մարդկանց անվանում էին զլաղյատորներ, և Սպարտակն էլ մի զլաղյատոր էր: Մի անգամ նա հենց այդպիսի մի կռիւ մեջ հաղթեց բոլոր հակառակորդներին. այնպես դուր յեկավ հանգիստականներին, վոր պահանջեցին ազատել նրան: Նրան ազատեցին: Նա վորոշեց ազատել բոլոր ստրուկներին, վորոնց ճնշում էին այն ժամանակվա տերերը: Երջեց բոլոր զլաղյատորների մոտ, վորոնց թիվը հարյուր հազարից անցնում էր Հռոմում և գլուխ բերեց ապստամբութիւնը:

Սարսափ տարածեց նա հոռմեական բոլոր տերերի վրա: Բոլոր ստրուկները հավաքվեցին նրա շուրջը. նրա ուժը հասավ ահագին չափերի: Նրա զեմ գորքեր ուղարկեցին, նա ջարդ ավեց նրանց: Բայց վերջ ի վերջո, դուրս բերին նրա զեմ իրենց բոլոր բանակները, և ընկավ հերոս Սպարտակն անհափասար կռուում: Ընկավ, չազատեց ստրուկներին, սակայն մենք կշարունակենք նրա գործը, և այլևս վոչ ստրուկ, վոչ էլ տերեր կմնան յերկրի յերեսին:

— Դա ուրեմն մեր Ստենկա Ռադինի նման մեկն է յեղել... հետաքրքիր է... այո:

Մեկը վեր կացավ ձիերին նայելու և կաղ ի կաղ հեռացավ խարուկի մոտից, վոտը թմրել էր:

Տղաները լուռ էին: Ուզում էին ելի լսել, լսել անվերջ:

Վուսինը բարձրացավ վեր ու վեր: Այժմ էլ քար չէր կարելի հասցնել նրան: Անտառում հառաչեց, ախ քաշեց բվեճը:

— Լսում ես, անտառային քաջքն է, տեսնես ելի ումն և մոլորեցնում:

— Այդ բվեճն է,— թռչուն է:

— Ուզած ժամանակը թռչուն է, ուզած ժամանակն անտառային քաջք:

— Տղերք, միթե դուք այդպիսի բանի հավատում եք: Չ'ե վոր պատավային հեքիաթներ են սրանք:

— Սսել է, գու չէս հավատում:

— Վոչ:

— Վոչ մի բանի:

— Իհարկե, վոչ մի բանի:

— Վոչ քաջքերին, վոչ էլ կերպարանափոխված մարդկանց:

— Վոչ:

— Իսկ բաղնիսում կը գիշերե՞ս:

— Կը գիշերեմ:

— Իսկ գերեզմանատուն գիշերով կը գնաս:

— Կը գնամ:

— Դե վոր եգպես է հենց հիմա գնա:

Վասյան չի ուզում այդպիսի հիմար բաներ խրախուսել, բայց հեղինակութիւնը պահելու համար հարկավոր է գնալ,— կասեն վախեցավ:

— Դե լավ, ցույց ավեք, ուր է ձեր գերեզմանատունը:

— Հրեն, այ, են ձորակի յետեր, տեսնում ես մի մատուռ է սեին տալիս:

— Ըհ՛ր, լավ:

վեր կացավ, ծիծաղեց և արագ ու թեթև սլացավ առաջ: Անցավ ձորակը: Շուրջը ձիերը ակտիվորեն խփշտում էին խոտը ֆորնչացնելով: Ահա գերեզմանատունը: Յանկապատը թափվել էր: Թռավ փոսի վրայով: Խլեզը սողաց յեղինճների մեջ: Կոխեց խաչը, — փթած էր, ցրիվ յեկավ: Ահա փոքրիք մատուռը — ծովել է, առանց լուսամուտների յե: Ներս մտավ — ւրլած ու փթած հոտը բռնել է մատուռը: Լապտերով լուսավորեց. — Բվեճը շրխկոցով թռավ պատուհանը, նստեց խաչի վրա և սուր ձայնով սկսեց ճչալ: Զարմացել էր, թե սա ինչ բան է:

Վասյան վերցրեց մոմի մնացորդը պատկերների պահարանի առջևից և դուրս յեկավ: Բվեճը նրա յետևից նայեց, նայեց և հետ թռավ իր տեղը:

Հետ յեկավ: Յուրջ ավեց մոմի կտորը.

Զարմացել էին:

— Այ, Պարֆենկա, թեև դու քաջ ես, յեզան վրա ել արշավել գիտես, բայց գերեզմանատուն չես գնա, — ասացին սղաները ժիր, կաղուտաշյա պատանուն:

— Չէ, կերթամ:

— Խաբում ես:

Դեռ ուշքի չեյին յեկել, վոր մեկեն յելավ Պարֆենկան և թռչկոտալով ուղղակի վազեց դեպի հանդստարան: Փոխանը ցած է ընկնում, մի ձեռքով բռնում է, մյուսը թափահարում: Ծածկվեց ձորակի յետեր:

— Նայիր, հետ է վազում:

— Վազում է, բայց ինչ վոր բան է բռնել. ճչում է. — և իսկապես, մի նայիր, նայիր:

Նայեց Վասյան, — խիստ արագ սլանում է Պարֆենկան, իսկ մազերի մեջ բուն է պինդ թաղվել: Թափահարում և թեվերը և թուչել չի կարողանում — խճողվել է:

— Բայց չէ՞ վոր դա բու յե: Կը պլոկի. բուն նրա կաշին: Վրա թափվեցին, աղատեցին Պարֆենկային, իսկ բու ին

գերի վերցրին: Բուն քիչ էր շանգոտել նրան, բայց Պարֆենկան լավ վախեցել էր:

— Յես, ասում է, հենց էյի իմանում, թե սա քաջ է:

**ՆՐԱՆ ԱՅԴՊԵՍ ԵՆ ՊԵՏԲ ԵՐ**

Ռ. Կ. Կ. և Կոմյերիամիության բջիջների ժողովը շատ հետաքրքիր էր. ղեկուցողը հետաքրքիր ու լավ բացատրեց Լորդ Բերգոնի հետ կապված պատմությունը, նրա վերջնագիրն ու մեր պատասխանը և թե նա ինչպես մեծ քիթ ստացավ:

Վասյան տանյակ սղաների հետ, վորոնք վաղուց արդեն խմբվել էյին նրա շուրջը՝ ժողովումն էր:

Ահա թե ինչ, չէ՞ վոր մենք իսկի չգիտեյինք, թե Բերգոն կա աշխարհումս, իսկ այժմ գիտենք. — ասում էյին սղաները Վասյային:

— Յեվ բջիջը քթներխ տակն է յեղել, իսկ ենտեղ դնալ՝ մտքներովս ամգամ չի անցել:

— Կնւզկա-ան, Կնւզմա-ան-ան, ուրես կորել, այ դանդաւոշ: Միջափողոցից դեմ ու դեմ գալիս ու կանչում էր շեկ-կարմիր, կարճահասակ ու հաստափոր գյուղացին:

— Տեսնում ես ղեվին, մի ժամ ել չի թողնում հեռանամ, ուզում է շարունակ տանը նստած մնամ:

— Իսկ ո՞վ է դա:

— Դա իմ աղան է: Բանում եմ նրա մոտ:

Վուրպայի գաղթականներից եմ: Յես իմ գործը կատարում եմ — փայտ եմ ջարդում, վարում եմ, ցաքանում և անասուններին մտիկ անում, — ել ինչ է ուզում: Չէ, ինչպես կլինի: Դու, ասում է, եղ անպիտանների մոտ քաջ չդաս, — կը թակեմ: Չար մարդ է... Շեկ-կարմիր Պետոյի հայրն է: Պետկան ել հենց իր հոր կտորն է:

Փնթփնթաց, փնթփնթաց Կուզման ու դեմեց դեպի ազան: Տերը կես ճանապարհին նրան հանդիպեց:

Շր-բախ:

Արցունքի յերկու կաթիլներ վազեցին Կուզկի աչքերից վզակոթին ստացած վիրավորական հարվածի պատճառով:

Տեսավ Վասյան, տեսան տղաները:

— Կեք, դուք իրավունք չունեք ձեռեյու, նա թրև չեր գալիս, նա գնացել էր բջիջի ժողովին:

Վասյան մոտեցավ գյուղացուն:

— Թքել եմ յես ձեր բջիջի վրա: Տեսնում ես ինչ նոր խորհրդատու ե գուրս յեկել: Դե, կորի՛ եստեղից: Ափսոս յես չեմ քո հայրը, թե չե մի լավ շանց կտայի:

Շուռ յեկավ գյուղացին ու գնաց:

Տղերքը հավաքական գանգատ տվին ժողովրդական դատարանին:

Տեսնում ես վոնցն ա, դորթա, պստիկը—պստիկ ա, համա իմանում ա, թե ում հետ վոնց պըտի վարվի,—ասում էյին գյուղում, յերբ գատարանը կուլակին մի լավ տուգանքի յենթարկեց: Պիտների ամուր, վայելչակազմ հասակին հարգանքով էյին նայում:

— Թո՛ղ, նրան եղպես ել պետք էր, ասում էր Կուզկան,—կը հեռանամ նրա մոտից: Կը դառնամ դպրոցի պահապան: Կը ծառայեմ ու կը սովորեմ:

Ա Շ Ն Ա Տ Ա Ն Գ

Կամաց-կամաց Վասյայի շուրջը համախմբվեց տղաների մի սերտ խմբակ: Միայն համարձակության և ուրախ բնավորության համար չէր, վոր սիրում էյին նրան. նա կարողանում էր հետաքրքիր գրույցներով ժամանակն անցկացնել և ոգտակար լսողերով զբաղեցնել: Մեծերն այլևս խեթ չէյին նայում նրա վրա—տեսնում էյին, վոր տղա-

երին վոչ թե աշխատանքից հանում է, այլ ընդհակառակը: Այ, հենց այս բուպեյիս. աղբ են կրում: Գյուղից դաշտն են ձգվում ձրոնչացող սայլերը: Ամբողջ գյուղն աշխատում է, իսկ պիտներները,—այսուհետև այսպես կը անվանենք տղաներին, թեև վերջնականապես նրանք դեռ պիտներ չեն դառել—պիտներները հետ չեն մնում:

Աղայական կարվածում կազմակերպվեց կոմմունա:

Յերկար դեռ ու դեն ընկավ Վասյայի հայրը Նիկիտա հորեղբոր հետ, վերջ ի վերջո գլուխ բերին: Շատ աշխատանք թափեցին:

— Համա, լափ հալից ընկաք ձեր եղ Կոմմունայով,—մորմոքված ասում էր Նասոյա հորաբուլը:

— Բան չկա:

Այժմ կարվածատիրական գոմում աշխատանքը յեռում է: Տասնյոթ թվից ենտեղ աղբ է հավաքվալ: Պիտներների գործն է միայն—ձիերը քշել դաշտից գոմ: Մեծերը լըցնում էյին աղբը: Ուրախ է անցնում աշխատանքը: Շո՛ղ է: Յերկիները կապույտ, կապույտ է, իսկ վերևում արծաթե դանգակների նման տաքրակների ձայնն է զրբնգում, ձրովողում: Նստած է Վասյան սայլի վրա, ուրախ է.—աշխատանքն ուրախացնում է, յերբ նա հաջող է առաջ գնում և յերբ փայտի ուժով չի անել տրվում: Չին իրեն իրեն գնում է, ճանապարհը գիտե, ահա մի տարի հանգստացած արար—շուտով ամբողջը կը ծածկվի շեկկ-արմիր աղբով և կը նմանվի չեչոտած յերեսի: Բայց դրա փոխարեն բերքը կրկնապատիկ է լինելու:

Համարյա, բոլոր տղաները կոմմունայումն են, բացի Պարֆենկից: Նրա մայրը զինվորի մի խեղճ կին է: Կանչում են նրան կոմմունայի մեջ, չի գնում: Տարտրինակ կին է:

— Ի՞նչպես յես գամ ձեզ մոտ, ասում է նա, առանց տնտեսության, առանց ձիու: Ամաչում եմ իմ փոքրիկ յերեխաներով նստել ձեր վզին:

Համոզում եր նրան Վասյայի հայրը, ասում եր, վոր կոմմունայի մեջ բոլորը հավասար իրավունքներով են մտնում,— բայց վնչ, դժվար ե նրան համոզել:

Ա Կ Ո Ւ Մ Բ

— Լենինը մեջտեղում, իսկ սրանք կողքերը:

— Ե՛յ, ե՛յ, Լիբկնեխտը կընկնի.— լավում ե աղայական տան բաց պատուհանից:

Կապոյտ սենյակում, նախկին աղայական մանկանոցում, պիոներներն իրենց ակումբն են սարքում:

Վասկա Չիրիկը, հասակով ամենից բարձր ե, դրա համար ել նրան են հանձնել նկարներ կախելը:

Իսկ Վասկա Գլինին— բանից յերևաց, վոր նկարիչ ե յեղել: «Պիոները հավատարիմ ե բանվորական գառակարգի գործին», «փոխարինում փոխարինման յետևից», վարպետներն դուրս ե բերում նշանաբաններն իր պատրաստած վրձինով:

Իսկ Պարֆենկան կալվածատիրական տան կտրան դրել ե մի մեծ սպիտակ շիշ — մի արշին տրամագծով: Կտարել ե ծայրերը և այժմ աղյուսով հղկում ե— ակվարիում եյին դարձնելու, վոր իրենց հարկավոր եր:

Բուկը մի քիչ կոտրած պահարաննե կարգի բերում, վորը կոմյեբրիտմիոթյան բջիջն եր տվել: Բուկը փայտային մասի վարպետ ե: Նա գիտե լավ բաներ փորագրել լորիններից:

Սոսք ե տալիս պատրաստել ձի, արոր, գեղջուկ, ամբողջ տնտեսություն, նոյնիսկ խրճիթ:

Ամենաշատը Վասյայի գործն ե: Պատին կախել և յեվրոպայի քարտեզը: Կարմիր դրոշակներով նշանակում ե մանկական կոմմունիստական խմբակների տեղերը:

Յերբ վերջացրին, գնացին շրային կենդանիներ վորտարու ակվարիումի համար: Գետակը մոտիկ ե:

Տասը բույսե չանցած Պարֆենկան, մոռանալով հագնել վարտիքը, վագեվազ անցավ այգու միջով՝ դոյլը լիքը ծովային ծածաններով, մանրածածաններով, արիտոններով ու գորտի շերեփուկներով:

Նարզին ակվարիում ստացվեց:

Յերեկոյան կոմյեբրիտմիոթյան քարտուղարը յեկավ պիոներական ակումբը տեսնելու: Գռան վրա կախած եր. «Լրկինո դյուզի Պիոներական ակումբ»: Ման յեկավ, ամեն տեղ կարգ ու մաքրություն եր տիրում: Սեղանին դրված եյին գրքեր.— «Պիոներ», «Ջրոյցներ խարույկի մոտ», «Պիոների հիշատակարանը»: Լուսամուտին դրած եր իրենց ձեռքով շինած ակվարիումը՝ պատին Լենինի, Լիբկնեխտի, Մարքսի նկարները:

Իսկ ամենից շատ քարտուղարին հետաքրքրեց Գիտագրամման:

38473

ՂԵԿԻՆՈ ԳՅՈՒՂԻ ԿՍՁՄԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՅՅԱԼԱԿԱՆ ԿՍՁՄԸ


Պ ի ո ն ե ր և ե ր		Շեկկարմիր Վասիկի խմբակը	
Ջրավորների զավակներ-5	5	Ջրավորների զավակներ.	1
Միջակների	4	Միջակների	5
Կուլակների	1	Կուլակների	9

Տեսնում ես սրանց, եստեղ ել գառակարգեր կան,— մտածեց նա:

Մի քանի ժամանակ առաջ լսել եր, վոր պիոներներին հակաիշխո՝ շեկկարմիրը խումբ եր կազմակերպել: «Յես, ասում եր, բոլորին կցրեմ»:

Պարծենում եր: Իսկ պիոներներն ասում եյին.

— Սոսում ե, խոսի, ճտերը աշնանը կհաշվեն:



## ԱՐՁԸ ԵՒ ԵԼԵԲՏՐԱԿԱՆ ԼԱՊՏԵՐԸ

Անտանն աղմուկով լցված է.— եքսկուրսյա յե:

Պիոներներն են—ել ուժքեր կարող են լինել: Մեծ, հին անտանն է: Սաղաղ է այնտեղ: Փայտփորիկը կակտացնում է, թռչնակը ճրթճրթում—և նորեն անդորրություն: Յե՛վ ձայները, մեկ թնդում են, մեկ էլ լուռ: Հետաքրքիր է անտանում, — հազարավոր կյանքեր են ապրում այնտեղ, բայց միայն փորձված մարդը կարող է նշմարել ու իմանալ այդ կյանքերը:

— Ահա դարավոր ծառը, գորշ, հանգուցավոր, կոնքրով ծածկված: Ըյուղերի մեջ կասես տանձ լինի, կախված է կրեանների բունը: Բոլորովին աննկատելի յե, բայց յերեխաները գտան տեղը:

— Ախ, յեթե կարողանանք ձեռք քցել: Հետաքրքրության համար կախ կտայինք ակումբում:

— Փորձենք: Բայց ինչպես անենք: Ո՛, նրանք ենպես չար են:

— Սպասեցեք, թողեք մտածենք...

— Տո՛, ուղղակի—փայտով թռցնենք:

— Չե, կձխլավի:

— Ըհը, գտա, ես բուպեյիս: Պարֆենկան սկսեց արագությամբ հանել բլուզը:

— Եդ ի՛նչ ես ուզում անել:

— Իսկույն: Կապեց բլուզի թևերն ու վիզը և բարձրացավ ծառը: Կրեանները համարյա թե չեյին թռչում: Տանձը կախված էր անշարժ ու կասես ծաղրում էր:

Պարֆենկան հասավ: Զգուշությամբ անցկացրեց շինած սուպրակի մեջ, բռնեց բունը և իսկոյն բլուզի ծայրերը կապեց:

— Կեցցե՛:

— Հաջողվեց: Կեցցե՛:

Պարֆենկան կտրեց ճյուղը, վորից կախված էր բունը և սկսեց իջնել: Կրեանները՝ գերի բռնված, կատաղեցին, վժժացին, աղմկեցին, բայց Պարֆենկի բլուզը հաստ էր:

Զ զ զ զ զ... ո՛յ ո՛յ...

Վորտեղից վոր էր, մի քանի կրեաններ վերադարձան:

Յերեխաները ձկվեցին, ով վորտեղ կարող էր: Պարֆենկան թագնվեց վոստերի մեջ: Ուշ էր: Դեղին, յերկարավուն կրեար վարպետությամբ իր խայթոցը մխեց տղայի մեջքին: Բզովեց խեղճը, բայց վորսը բաց չթողեց: Շրը՛ մփ, թաթով սասկեցրեց կրեաին:

Ուշքի յեկան տղաները, վտանգավոր տեղից հեռացան իսկ Պարֆենկի մեջքին գուրս յեկավ մի մեծ, կարմիր բշտիկ:

Յերկար ման յեկան: Միակա կոտեխը մասնագետ էր թռչունների բներ գտնելու մեջ: Բներից մեկական ձվեր եյին հավաքում կոլլեկցյայի համար: Շատ հավաքեցին, տեսակ-տեսակ: Թփերի տակից փոքրիկ վոգնի բռնեցին— ծակող փշերով. ծիծաղելի յեր, կծկվեց— վախում էր:

Յերբ լճի մոտ գուրս յեկան, արդեն մոտ էր յերեկոն: Լիճը սև էր, ահարկու, չորս կողմը անտառ: Զրի մեջ ընկղմված ծառերի չոր ճյուղերն այստեղ-այնտեղ գուրս են ցցված: Տղաները յերբեք այստեղ չեյին յեղել: «Գայլի կամուրջ» է կոչվում այս տեղը: Լավ չե այս վայրը, շատ ուրիշ բաներեն խոսում գյուղում այս վայրի մասին: Զուրը հանգարա է հայելու նման: Ուզում ես մի բանով խանգարել այս խաղաղությունը: Տղաները ծղրտացին: Աղմուկով վեր թռավ կարապների յերամբ, և սուրոց բարձրացրին իրենց թևերի թափահարումներով, և ցածր ձգվեցին անտառի վրայով: Այնտեղ, ուր նրանք նստեցին, շուրը պտոյաններ էր անում: Պառկեցին ափին— հանգստանում են:

— Ի՛նչ լավ է եստեղ, աղերք:



— Դուրեկան ե, և իսկի չես ուզում տուն գնալ:

— Գիշերենք այստեղ:

Անտառի հետևը հրգեհում ե վերջալույսը: Ծառերի կատարները վտակեղոծվել են: Լիճք, նա ել ե ծածկված կարմրավուն բծերով: Սաղաղ ե: Յախ հավաքեցին խարույկի համար: Ամենաանվտանգ տեղում, հրդեհ առաջ չբերելու համար, հիմնեցին իրենց կայանը: Կանգնեց սպիտակ վրանը: Նրան մոտիկ պալան-պալան բարձրացավ թուխ կապտավուն հոտավետ ծուխի հոսանքը: Փոքրիկ կաթսայից դատարկեցին ձվերը և սկսեցին կաթնով պատրաստել: Յերկու-յերեք մոծակ վողորմելի կերպով աղաղում էյին: Արևմուտքը թանձրացավ, գեղնեց՝ նոր մեղրի նման: Տաք ու մեղմ յերեկո եր: Յերկինքը թավշանման եր դառնում, մթնում եր: Վառվեցին աստղերը: Արտացոլացին լճի մեջ: Ջեփյունն ուզեց նրանց բռնել, կոհակներ հանեց լճի յերեսին:— Նրանք ցրվեցին, վերջացավ զեփյուռը, հանգրստացավ, մրմունջ արձակելով յեղեգնի մեջ:

— Բա դիտեք, աղերք, վոր այս բոլոր աստղերը այնպես մեծ մոլորականերեն, ինչպես մեր յերկիրն ե, իսկ շատերը՝ ել ավելի մեծ:

Ե՛, յես չեմ հավատում: Մեր ուսուցիչն ել ասում եր, բայց եղբան գարմանալի բան չի կարող լինել:

— Ջարմանալի չե, այդ արդեն զիտնականներն ապացուցել են: Մի տեսակ խոզովակ կա՝ տելեսկոպ, նրանով զիտում են այս մոլորակները:

— Իսկ մարդիկ կան այնտեղ:

— Այդ դեռ հայանի չե, կարծում են, որ կա:

— Իսկ ինձ տատիկս ասել ե, վոր իբր թե, յերկինքը յերեք կես ձկների վրա յե կանգնած: Այդ ճիշտ ե:

— Այդ, յեղբայր, քո տատիկի հեքիաթներն են: Նա յերեկ քեզ ասել ե, վոր իբր այս բոլորին աստված ե ստեղծել:

Վասյա Գլինին ապշեց.

— Ասել ե:

— Ի՞նչպես ե ասել:

— Դե, ենպես, աստված ուզել ե իրեն ուրախացնել, դրա համար ել ստեղծել ե յերկիրը, զանազան լուսատուներ և ավել նրան, կավից մարդ ու զանազան զազաններ ե կերտել:

— Բոլորն ել նա յե ստեղծել:

— Բոլորն ել...

Ե, իսկ լու՛ն ինչպես, առանց գործիքի ձեռքերով չե՞ վոր դժվար ե:

— Հա՛, հա՛, հա՛: Ճիշտ վոր, ե, լուն ի՞նչպես ե ստեղծել: Անտառում մի ինչ վոր բան ճրրթճրթաց: Սարույկը հանգչելու վրա յեր: Բոլորովին մտաիկ մի բան սկսեց թնթնալ, խլխլալ: Ճարճարթեց մի չոր ճյուղ, և...

— Ա՛րջը:

Փռչոտ, սարսափելի վիթխարին մարգագետին դուրս յեկավ և մոթմոթաց: Պիտներները հետ բաշվեցին: Վիթխարին որորվեց և ուղիղ նրանց վրա սկսեց խլխլալ: Կասես մեխվել էյին, տղաները չկարողացան տեղներից շարժվել: Յերկյուղից կամքը կորցրել էյին:

Վասյան խլեց ելեքտրական լապտերը... Շլացուցիչ սպիտակ լոյսն ընկավ գազանի մուռթին: Արջը չեր սպասում այդպիսի բանի, նստեց տեղում, պլուխը թափահարեց փրնթփրնթաց և իրեն քցեց մացառուտը... Յերկար ժամանակ ճարճաթում էյին չոր ճյուղերը—սաստիկ վախեցավ:

Ուշքի յեկան պիտներները, յերկյուղն անցավ:

— Յերեկ, հիմա տասը վերստ ճանապարհ կտրեց:

Այ՛ թե պետք յեկավ լապտերը:

— Ի՞նչ դժբաղաություն եր հասնելու մեզ: Գիշերվա մնացած մասն արջերի մասին պատմություններ անելով անցկացրին:

## Հ Ա Ր Ձ Ա Կ Ո Ւ Մ

Չով առավոտ ե: Արշալոյսի հետ թուան յեկան կարախները. նրանք արծաթագուշն եյին, սպիտակ: Պիտներները նրանց չվախեցրին,—գվարձալի յեր նայել: Պատրաստվեցին տուն վերադառնալու: Բայց վոչ մեկը չգիտեր դեպի վոր կողմը և ուր գնալ:

— Սպասեցեք, իսկոյն կիմանանք: Վասյան հանեց կողմնացույցը: Նայեց, հաշիվ արավ:

— Ըհը, գնանք ահա այսպես:

Գնացին: Գնում եյին յերկար, ուղիղ: Դուրս յեկան ճանապարհից վոչ այնքան հեռու:

— Այդ ինչպես իմացար, հարցնում եյին տղաները Վասյային:

— Շատ պարզ. ահա, տեսնում եք այս բանը: Սա կողմնացույց ե: Ահա սլաքը, վորը պտտվում ե: Այս սլաքը մազնիտից ե, ինչպես ել շարժես նրան, դեպի հյուսիս ե դառնում—վորովհետև այնտեղ ե կենտրոնացած մազնիտը: Նշանակում ե, սրանով միշտ կարելի յե իմանալ հյուսիսը, իսկ հյուսիսը դուրս, նրա դիմացն ել հարաջն ե, աջ կողմն արևմուտքը և ձախը՝ արևելք, յեթե յերեսդ դարձնես հարավ: Իսկ եյթե իմացար բոլոր կողմերը, այն ժամանակ, մոտավորապես իմանալով, ինչպես ե Լըկինոյի դիրքը, հեշտ ե տեղը գտնել:

Տղաները յերկար գնում եյին կողմնացույցը: Անտառից յերեք վերստի վրա բոլորովին պարզ յերևում եր գյուղը, կալվածատիրոջ տունը և յեկեղեցին: Նստեցին տղաները, հանգստանում եյին: Նրանց մոտով անցան յերեք ձիավոր տղաներ. տարել եյին ձիերն ինչ վոր տեղ արածեցնելու:

— Պետիկինի բարեկամներն են, ասաց Բուկը:

— Նրանք մեզ ցրել են ուզում:

— Դուրս են տալիս, ինչ կարող են անել:

Կովին յեղիը պատրաստ,

Ահա նշանաբան,

Յեղիը առողջ, կայտառ,

Սովորիը փոքրությունից:

Հնչիը, իմ յերգ

Պիտներական,

Չգնույ, բուրժույ,

Հոկամբերյան

Չավակներից...

Կայտառ հնչում ե ուրախ յերգը լայնարձակ տարածության մեջ: Պիտներներն են գալիս եքսկուրսյայից: Ամեն ինչ ուրախ ե: Արծաթին ե տալիս կանանչներին նստած ցողը, վոսկե ժպիտով ծիծաղում ե կտավհատը: Ազատ ու լայնարձակ: Լսվե ապրելը: Ազատություն ե—կարելի յե ուրախանալ, կարելի յե յերգել:

Տերեփուկներից կապոյտ ե երկինքը, յերկնքից ել կապոյտ գետի ժապավենը: Հաճարը՝ նա ել մի տեսակ դեղնակապույտին ե տալիս... Լսվ ե...

Ո՞վ ե կարող լսանգարել հարթավայրի յերջանկությունը: Ովքեր են Բերգոնները: Ն՛, դեռ չգիտեն նրանք մեր ուժը:

Հասան գյուղի մոտիկ ձորակին:

— Տղերք, մի տեսեք, մեկը նայում ե ենտեղից...

— Տես, տես, ճիշտ վոր ե...

— Ել ո՞վ կարող ե լինել, շեկ-կարմիր Պետոն ե, դարան ե մտել իր ընկերներով:

Վարպետությամբ ձորակի թփերում թագնված ինչ վոր մեկի կերպարանքը դիտում եր պիտներներին:

— Դարան են մտել: Ն՛, ինչ արած: Կանգնեցեք տղերք:

— Յեկեք խորհրդակցենք, ինչ ենք անելու:

— Խփեք վրանք, իբր թե բանակենք զնում հանգրտանալու:

— Ահա թե ինչ, պետք չե ձորակը գնալ. նրանք շատ են, նրանք մեզ կհաղթեն: Մի բան պիտի անել:

— Յեկեք վրանը թողնենք ետակ, իսկ մենք, ահա այս նեղ շերտով նրանց թիկունքը գուրս դանք, նրանք կկարծեն թե մենք պառկեցինք քնելու, և մեզ սպասելիս չեն լինի:

— Ճիշտ է:—Այդպես ել արին: Բոլորը համաձայնեցին Բուկի առաջարկին:

Թագցրին բոլոր իրերը, թողեցին Վանկա Չիրիկին պահապան. . «մի բան պատահելիս, գոնե վրանն ազատիր», գնացին:

Վոչ թե գնում էին, այլ կատվի նման սողում կանաչ շերտի միջով:

Չորակում թագնվել էին տասներկուսի չափ տղաներ:

— Հը, ինչե, գալիս են, թե չե:

— Բանակ դրեցին:

— Տեսնում ես, դեեր, կարծես զգացին:

— Պահակ կա:

— Կա:

— Տես, պառկեցին քնելու, գիշերը յերևի թրև են յեկել:

— Յեկեք սողալով գնանք.

Կռանալով դուրս յելան ձորակից և բարձր խոտերի միջով սկսեցին առաջ սողալ:

— Ամենից առաջ, վրանը ձեռք քցել:

— Իրեն՝ Վասկային ել ձեռքից բաց չթողնել:

Սողում են:

Կանգնած է Վանկա Չիրիկը պահակ, յերկար վիզը կռունկի նման պարզել է: Վտանգը մեծ է:

Հանկարծ խոտերն որորվեցին, միքիչ ել, միքիչ ել, յերևաց մի գլուխ, յերկրորդը... Ո՛ր, զժբողգություն:

Սողում են, մտաիկ... մտաիկ... Եթ, բայց ուր են մերոնք:

Իսկ պիտներները թիկունք անցան:

— Կացեք, մի քիչ շունչ քաշենք:

— Պետք է շտապել, Վանիկի բանը վատ է:

— Դե, տղերք: Նրանք յերբեք այսպիսի բանի չեյին սպասի, համարձակ: Վորքան կարողեք շատերին գերի վերցրեք:

— Ուռու-տ-տ...

Վեր ցատկեցին Վասկայի խմբի անդամները, թե ինչ է պատահել՝ չեն հասկանում:

Մեկ—յերկու: Կուզկա Բուկը յերկուսին գլորեց: Պարֆենկան շեկ-կարմրին քցեց... Ելի, ելի... Խառնվեցին, շիթվեցին, չզիմացան, ցրվեցին զանազան կողմեր: Շեկ-կարմրին գերի վերցրին: Հարցաքննության յենթարկեցին, ինչու սարքեց այս բոլոր պատմությունը: Կրմկմաց, կրմկմաց տղան, բայց չկարողացավ ասել, թե ինչու. ինքն ել չգիտեր: Նրան այն պայմանով բաց թողին, վոր ցրի իր շայկան և այլ ևս այդպիսի գորչելի բաներ չանի:

### Ն Ե Ր Կ Ա Յ Ա Յ Ո Ւ Մ

Կարվածատիրական տան աջ յերեսին արշինաչափ ափիչ է կպցրած: Ներկայացում են տալու պիտներները— Վասյան՝ իրայիններով:

Տոմսակների վաճառումը յեռանդով առաջ է գնում: Սիրտոզ հրձվում է: Մուտքի կեսը—գրքերի ու ամսագրերի յե հատկացվելու, կեսն ել գերմանիայի յերեսխաներին:

Տունը յերեկոյան հսկա փեթակի նման աղմուկով է լցված: Դահլիճում ասեղ քցելու տեղ չկա: Սկզբում Գերմանայի կյանքից, հետո ել կոմիքական պիյեսներ արվեցին: Ներկայացումից առաջ դուրս եկավ Վասյան, գեկույեց պիտներական շարժման մասին:



— Եւոք յեկել է, անպայման նեոն յեկել է: Փոր-  
րիկ յերեխաները—կոմունիստներ են դառել. ախ եր քա-  
շում հասակավոր մի կին:

— Ի՛նչ, հորաքույր Անիայա, բաց թող, լավ բան է:  
Յեթե բոլորն էլ սրանց նման լինին, վոչ մի անհավատ մեզ  
չի հաղթի,—հակաձառեց մի ավելի յերիտասարդը:

Զեկուցումը լավ ընդունելութուն գտավ: Վերջացնե-  
լուց հետո, հեռանալիս անդադար լսում եր, թե ինչպէս  
դուզացիները զրուցում են իր զեկուցումի մասին:

Վարագույրը բացվեց:

Լայն բացեցին աչքերը, վոչ պակաս լայն-բերանները:

Վա՛, մի մտիկ արա, սա խո իմ Պարֆենկան է, այ  
քեզ սատանի ձուտ, զարմացավ խեղճ Արինան:

Պարֆենկի դերը լավն եր: Խաղում էին աշխույժով: Այն-  
քան իրական եր, վոր կասես, իսկը Գերմանիայում լիներ:

Հարյուրավոր ձեռքերի ծափահարութունը լավեց  
լուսամուտներէց, արթնացրեց պարտեզը և յերկար ժամա-  
նակ քնաթաթախ թռչունների յերամբ վախից թափահա-  
րում էին թևերը. Այդ պիեսան եր, վոր վերջացավ:

Յերկրորդը—կատակերգութուն եր: Ծիծաղից թու-  
լացան, խողտեցին: Հեռանալիս յերկար ժամանակ աղ-  
մկում էին, խմբվում, խնդրում հետևյալ ներկայացման  
որը նշանակել:

Լըկինոյում քիչ անգամ եր ներկայացում տրվում:  
Կոմյերիտիության բՆԻՆում առանց այդ էլ աշխատանք  
չատ կար:

Յերբ Վասյան գրիմը վերցրեց, մոտեցավ Ռ. Կ. Կ.-ի  
քարտուղարը:

— Դե, յերիտասարդ, շնորհակալ եմ քեզնից: Յերե-  
վում է լավ փոխանորդ եք լինելու կոմսոմոլներին, յեթե  
զուք բոլորդ էլ այդպէս զործունյա յեք: Մի անգամ  
ժողովում գու կատարումների մասին խոսեցիր,—յեւ կոմ-  
մունայում կհոգամ, կտորեզեն կա, կպատրաստեն:

Բավականին փող հավաքեցին և ուղարկեցին Մոսկվա  
Գերմանիայի յերեխաների ոգտին: Բացի այդ «Պիոներ»-ի և  
ուրիշ գործերի համար էլ փող մնաց:

**ԿՈՒՋԿԻՆԻ ԱՐՋԵՍՏԱՆՈՅԸ.**

Մեղունների ձագ հանելու ժամանակը հասավ: Կոմ-  
մունան վորոչեց մեղվանոց հիմներ: Յեզոր Իվանովիչ Կար-  
պովը յերկար ժամանակ մնացել եր գերմանական գերու-  
թյան մեջ—և լավ եր իմանում փեթակներ պատրաստել:  
Սարայներից մեկում նա իրեն համար արհեստանոց հիմնեց:  
Կուզկան յեկավ նրա մոտ:

— Յեզոր հորեղբայր, վերցրու ինձ քեզ ողնական:

Լավ, յեթե ցանկութուն ունես, արի: Կուզկայի  
ձեռքերը քոր յեկան:

Ո՛, ինչպես սիրում է նա աաաղձագործութուն: Ան-  
միջպէս վոսկե բարակ տաշեղները փաթաթվեցին, ցա-  
կոսեցին թռչնակների նման: Բուրավետ փայտ է—մեղրե յե:  
Բուրմունքը խտտացնում է քիթդ, արբեցնում: Տախտակ-  
ները դուրս են գալիս հարթ, գեղին: Յեզոր հորեղբայրը  
ձարսկությամբ, մեկը մյուսին հազցնելով՝ մեղունների հե-  
տաքրքիր տնակներ է պատրաստում:

— Եզ ուր ես կորել, կուզկա, չես յերեվում:

Զեզ մոտ աաաղձանոցում, կոմմունայում. Յեզոր  
հորեղբոր մոտ ողնական եմ մտել:

Գործունյա աղա յե, ասում եր Յեզոր հորեղբայրը  
Կուզկայի մասին կոմմունայի նախագահ Նիկիտային. —  
նրան պիտի մեզ մոտ վերցնել: Աշխատում է, արհեստա-  
նոցից դուրս չի գալիս: Յերեկ յես հեռացա, իսկ նա վեր-  
ցրել է բոլոր փեթակների վրա աստղանիշ է շինել և գրել՝  
«Կոմմունա—աշխատանք», և այնքան հմուտ, վոր ինչ ասես  
արժե:

Մի անգամ Յեզոր հորեղբայրը հիվանդացավ—տա-  
րան հիվանդանոց:

—Դժբաղդություն է,—բնկճված ասոււ էր Նիկի-  
տան,—մեղվանոցի գործը չի հաջողվում: Ընդամենը յոթը  
փեթակ է շինված:

Նիկիտա հորեղբայր, փեթակները յերբ են հարկավոր:

— Յերկու շաբաթից:

— Յես կշինեմ:

Ինչ էս դուրս տալիս, շնորք է հարկավոր:

— Յես կարող եմ: Թողեք մի հատ նմուշի համար  
շինեմ:

Լավ, փորձիր:

Ամբողջ սրը, արշալուստից մինչ արշալուստ կուզման  
տքնում էր արհեստանոցում:

Մենակ չէր, Պարֆինկայի հետ էր: Մի որում հաս-  
ցրեց փեթակը:

— Ոհո, եղ խո կարգին վարպետ ես յեղել: Ապրես:  
Յեզորինիցը պակաս չե, — գարմացավ Նիկիտան:

Կուզման հանձն առավ տասներկու հատ ևս պատ-  
րաստելու:

Կուզման առաջարկեց պիոներներին արհեստանոցում  
աշխատել, փորին նրանք ջերմ արձակագանք տվին: Մեծ  
մասը գիտեր մի քիչ սանդուխտ, մի քիչ սղոցել:

Աշխատանքը յեռում է, Տաշեղները կույտերի մեջ  
թաղվում են փոտքերը, ուսնդաները յերգում են լորի  
փայտի վրա: Վասայի ձեռքերն անսովորությունից պողո՛շ-  
կան են—վնչինչ:

Մեկ մեկու հետևից ստեղծվում են մեղունների տը-  
նակները: Կուզկան լուրջ է, առանց շտապելու կանո-  
նավորում է փեթակները, ցուցմունքներ է տալիս: Մաս-  
նագետ է, ինչ կարողես ասել:

Նիկիտա հորեղբայրը, ամեն անգամ արհեստանոց  
մտնելիս՝ հրճվում էր:

Կեցցեն, ախպեր: Բայց, իհարկե, գլխավորը կուզ կան  
է: Անպայման կոմմունայի մեջ ենք ընդունելու:

Աշխատանքը վերջացրին: Մնաց ներկելը: Կուզ կան և  
Վասայան փակվեցին սարայում՝ յերեք որ դուրս չեյին գա-  
լիս: Մի անգամ առավոտյան դուրս յեկավ Նիկիտան և  
զարմացավ—արևի տակեն դրված փեթակները, չորանում  
են, իսկ փեթակները վրա մի կողմից Լենինի, կամ Մարք-  
սի, կամ Լիբկնեխտի նկարն է, մի կողմից—մուրճն ու  
մանգաղը, և գրված է.— «կոմմունա—աշխատանք», իսկ  
մյուս յերկու կողմից՝ աշխատանքի, հեղափոխության մա-  
սին զանազան նշանաբաններ:

— Նկարչական գալլերեյա:

Առաջին յոթը «ճանճը» բերին: Մտղանման ցանցե-  
րում խիտ-խիտ նստած էյին ընտանիքները: Յեկավ մեղ-  
վաբույժը: Մեղվանոցի համար տեղ ընտրեցին պարտիզում,  
ուղիղ գետափի մոտիկ մարգագետնի վրա:

Ամբողջ կոմմունան հավաքվել էր տեսնելու, թե  
ինչպես են տեղավորում «ճանճերը»: Տեղավորում էյին  
արևի մայր մանելու ժամանակ. մայր մանելու ժամանակ  
լավ է-մեղունները հանգիստ են լինում:

Կուզ կան ու Վասայան ցանցեր էյին հագել, ողնում էյին:

Առավոտյան ուրախ ազմուկով լցված էր մարգագե-  
տինը, մեղվային վոսկե անձրեր հյուսում էր անդատար  
իբ վոստախը: Հաճելի յե պառկել և յսել դյուրեկան, մի-  
որինակ վժժոցը և սովորել, թե ինչպես պետք է աշխատել:

### ԳԱԿԱԿԱՆ ՏՈՆԸ

Բորիս և Գլեբը—Լըկինոյում գահական տոն է:

Մումուլով զընգզընգում էր յեկեղեցին առավոտյան.  
Քթի մեջ յերգեց տերտերը, և գյուղացիները իրենց անե-  
րը ցրվեցին հաց ուտելու, սղի խմելու: Կեսորին շրջում էյին  
գյուղում, որորվում էյին, զովանում,—տոն էր:

Իսկ դաշտում հաճարն է մնացել: Լավ եր այս տար-  
վա բերքը, շատ են հնձել—մնացել եր սուռն կրելը: Ուրախ  
են գյուղացիք, գոհ են: Ամեն ինչի կրավահանացնի—և  
սուրբը կվճարեն և տնային զանազան պետքերը կհոգան:

Առավոտվանից որը այրում ե: Արշարույսը յերկնքի  
մի մասը պատեց կտավով, և արևը ծագեց՝ կարմիր, այրող:

— Ծոզ ե լինելու, — ասում էյին ծերունիները: Իսկ  
կոմմունայում բարոմետրը փոթորիկ եր գուշակում:

— Հլա նայիր, սանահեր, կոմմունան խուրձերը բե-  
րելու յե գնացել: Այ անիծվիք դուք հա. տունն ել սրանց  
համար նշանակութունն չունի: Միայն աշխատելը գիտեն:

Բայց Միկիտան ասում ե, փոթորիկ ե լինելու.  
նրանց բարոման ե ցույց տալիս:

— Բոլորովին խելքները կորցրել են իրենց «բարո-  
մայով», գասում էյին իբար մեջ յերկու սանահեր, գիտե-  
լով, թե ինչպես կոմմունայի սայլերը շարան-շարան զաշա  
էյին գնում:

Առավոտից սկսած աշխատանքը վատ չեր գնում: Դան-  
դաղ լողում էյին գյուղական նավերը հաճարե վոսկով:  
Բայց ճաշին աշխատանքներն արագացրին: Մինչև յերեկո  
չենք հասցնի — ասում էյին:

Իսկ բարոմետրը ընկնում եր ու ընկնում:

Պիտներները մեծերի հետ են: Աշխատանքը յեռում ե.  
խուրձերը թռչում են սայլերի վրա. շտապով քշում են  
սայլերը, շուռում ե քրտինքը բոլորից—շոգ ե: Հաճարը ծա-  
կող ե, ձեռքները ամբողջովին ծակծկվել ե: Վոչինչ:

Գյուղում գյուղացիք շարունակ ծիծաղում էյին, բայց  
այդ յերկար չտեվեց: Կեսորին մտա արևը ծածկվեց, յեր-  
կինքը սեացավ: Սև թուխ կապույտ ամպերն անտառի  
յետևից սահեցին. մտտենում եր մրրիկը: Վորպես վիրավոր,  
ճշում են կարապները, սայլերն առաջ են նետվում, շուտ,  
շուտ. ախ, յեթե կարողանայինք տեղ հասնել: Չեռքերը  
բերվում են—անզգայեն. քրտինքը ջրի նման թափվում ե,

աննկատելի նվազում ու նվազում են փոքրիկ գեղերի  
խմբերը, սարայները ուռչում են բուրավետ հաճարով: Մա-  
տե սև ամպը: Ծանր ե ողբ: Արագ սլանում են ծիծեռնակ-  
ները հունձերի վրայով, շողում են կապույտ փայլակի նման:

Խաղաղ ե: Ել ավելի խաղաղ: փչեց թեթև քամին:  
Ահա արդեն յերկնքի կեսը սեացավ, շուտով արևն ել կը-  
ծածկվի: Սարսափելի յե: Սուր ձայնով անհանգիստ ճան-  
չում են սայլի անիվները: Չեռքերը հոգնել են: Ծուռ,  
չուտ: Վերջին բարձած սայլն ե:

Հագիվ եր Բուկը վերջին սայլի հետ սարայ մտել, վոր  
մի ինչ վոր բան ճայթեց, տնքաց, սլաց, դլխակոնձի վայր  
թռավ նա սայլից—սայլը շուռ յեկավ: վախեցած նապաս-  
տակների նման թռչկոտում էյին խուրձերը զաշտի միջով  
գեպի գետը, գեպի անտառ, զանազան կողմեր: Եխ, տակն  
ու վրա յեղավ ամեն ինչ:

Ուրուրի նման պոկոտում եր քամին խրձիթներից  
վոսկեգոծ ծղնոտների փետուրե կտորտանքը: Հետո անձ-  
բեր վրա տվեց: Ամբողջ գիշերը կատաղի փչում եր քամին:

Գյուղացիք առավոտյան ծոծրակներն էյին քորում: Այ  
քեղ գահ, այ քեղ Բորիս-Գլեր: Հացի կեսն ել չեր մնացել:  
Աստծու հաճոյակատարներ:

Թող բողազներին կանգնի:

## Մ Ի Ո Յ Ի Ն

Կուլակները կոմմունայի վրա զայրացել էյին, սպառ-  
նում էյին հրդեհել:

Մի անգամ Միտկա Կոտրիսը վաղեց յեկավ, տղերքը  
բաղաբ-բաղաբ էյին խաղում:

— Այսոր ուզում են հրդեհել... մեր հացի սարայը...

— Խարում ես:

— Ընչո, չեմ խաբում: Պատահմամբ լսեցի: Կանգ-

նած էյի Շեկ-կարմրենց սրահում, նրանց Պետիկի հետ, և Կուզմա հորյեղբայրը ասում էր Յեզոր Դոնինին.— «Դու, ասում ե, տրուտ խցկիր, վոչ վոք չի իմանա...» յես իսկույն գլխի ընկա:

— Իսկ ի՞նչ բան ե այդ «տրուտ» ասածդ:

— Դա մի տեսակ չորացած սունկ ե, վառում են ու փաթաթում վուշի մեջ, նա եղպես ծխում ե: Յերկու յերեք ժամից հետո բոցավառվում ե՝ կրակ դարձած: Գցիր դա ծղնոտների մեջ— դե, հրդեհն արդեն պատրաստ ե:

Վորոշեցին հացի սարայի վրա սահապան նշանակել: Յերեկը հսկում էյին մուտքը և շուրջը: Սարայը բաց եր: Պատրաստվում էյին կարսելու:

Յերեկոյան դեմ յեկավ Յեզոր Դոնինը, վորը մի փուչ, շվայտ սպտանի յեր: Խնդրում եր հողմահար մեք, նան: Տվեցին

Յերկար խոտում ու դուրս եր ապրիս Նիկիտա հորյեղբոր և Վասյայի հոր հետ. պատրաստվեց հեռանալ: Դարբասի մոտ, ծղնոտների կույտի մեջ սայթաքվեց, գլխարկը, ընկավ, վերցրեց ու դուրս գնաց:

Կոց, եստեղ մի բան կա:

Վասյան մոտեցավ նույն տեղին, սկսեց ուշադրութեամբ գննել: Կարծես բան չի յերևում: Պառկեց ու սկսեց հոտոտել, մշահոտ ել չի գալիս: Զգուշութեամբ սկսեց տակն ու վրա անել ծղնոտները, վոչինչ չկա: Ուզում ե, արդեն հեռանալ, մեկ ել փոտով փորփրեց, մի ինչ վոք բան տեսավ, բուռնցքի մեծութեամբ մի վուշի կտոր:

Այ, Հենց ես ե, վոր կա:

Նիկիտա հորյեղբայր, հապա նայիր, անա նրանց «ոյին»-ը:

Ի՞նչ:

— Այ, անա:

— Եղ վորտեղ եր:

— Հենց այն տեղում, վորտեղ Յեզորը սայթաքեց:

Գունատվեց հորյեղբայրը: Բացարին. մեջ տեղը մի կտոր տրուտ հագրիվ մխում եր:

— Այ քեզ սատանայական «ոյին», կարող էյինք առանց հացի մնալ:

— Այո, յեթե չլինեյին պիոներները:

### ՃԱՆԴԻՍԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐԿ ԴՆԵԼԸ

Պիոներներին, կոմսոմոլներին և Ռ. Կ. Կ. -ան միացյալ ժողովում Վասյան առաջարկեց վոր գալատը հաստատի ողակը, իսկ ողակապետ—Բուկին:

— Բուկին, Բուկին, նրան:—Միաձայն:

Ընթացիկ հարցերի մեջ վորոշեցին մարգագետնում խաղեր սարքել և յերգերով տոնել Վասյայի մեկնումը:

Ժողովի վերջը Վասյային մոտեցավ, ի՞նչ եք կարծում, թվ,— շեկ-կարմիր Պետյան:

— Ինձ ել ընդունեցեք, վորովհետև ձեզ մոտ շատ հետաքրքիր ե, յես առաջ չէյի հասկանում, այժմ պատրաստ եմ ձեզ համար ընկնել կրակն ել, ջուրն ել:

— Լավ, ինչպես ժողովը կը վորոշի:

— Ընկերներ, ընդունելութեան համար խնդիր կա մի ընկերոջ կողմից...

Հարցը յերկար ձեծվեց: Գործը լուրջ եր: Յեզրակացութիւն հանվեց.— «Նկատի ունենալով անկեղծ գղջումը և աշխատելու ցանկութիւնը, —ընդունել»:

Ուրախութիւնից տղան յեթիցերորդ յերկնքում եր զգում իրեն:

Չեր սպասում, մտածում եր, ո՞ւր ե թե...

Այդ յերեկո տուն վերադարձավ շիկ—կարմիր Կուզման, նստեց սեղանին, գլուխն առավ ձեռքերի մեջ ու սկսեց զոգրուարով լաց լինել:

— Մորթեցին: Առանց դանակ մորթեցին անիծված-

ները: Յես ել վորդի չունիմ: Իմ թշնամիների կողմն անցավ:

— Այդ ինչ է, ինչե պատահել քեզ, հերիկս, իրար անցավ տանտիկինը:

— Կորիւր, դու չես հասկանա:

Կարծես մի բան կարվեց գլուղացու սրտից, իրեն մենակ ու անժառանգ զգաց:

Պարզ աշնանային որ եր: Առժու-խոժու նայում էր հին տունը մարգագետնում հավաքված ուրախ ամբոխի վրա. մտայլվել էր իր ճակատին կպցրած նոր ներկած ցուցանակի պատճառով. — «Ժողովրդական տուն»:

Բայց արեւը բարի պառավի նման ժպտում էր մեզմ ու տար:

Մարգագետնում պիտներներն են. խաղեր, շուրջ պարեր, բերանացի որաթերթ... Լիքը ժողովուրդ է:

— Տեսնում ես, յերբ եր եսպես բան յեզել: Մեր տղաները, կտես աղնվականի յերեխաներ լինեն, կատույումներ, կարմիր փողկապեր, կոմունայումն են կարել...

— Ել մի առա, ինամի Մատրենա, ել մի ասա: Ամեն ինչ փոխվել է. ձվերը հավին դաս են տալիս:

— Ճիշտ ա, աստված վկա:

— Համա բոլորը եզ մոսկովցին արավ, հա:

— Հրա մի լսիր թե, եզ ինչա կարգում:

— Գերմանիայից ստացվել է կենտրոնական բյուրոյի միջոցով մեր ուղարկած նամակի և նվիրատվության պատասխանը:

«Թանկագին ընկերներ: Շատ ուրախ ենք ձեզից ստացած այն լուրերի համար, որով հաղորդում եք, թե դուք ինչպես եք ապրում, ինչպես պատրաստվում պայքարի և կերտում նոր կյանք: Ձեր տողերը կարգալով մենք ավելի ու ավելի ենք վստահութուն ձեռք բերում. մենք կապիտալիստների լուծը կթոթափենք և կմեկնենք ձեզ մեր ազատ ձեռքը: Իսկ առայժմ գաղտնի յետարվում

մեր գործունեությունը. մենք դեռ չենք կերտում, մենք պիտի կործանենք հինը, և մենք այդ կանենք: Գերմանացի բոլոր յերեխաների կողմից շնորհակալություն ենք հայտնում ձեր ցույց տված ոգնության համար: Մեզ մոտ սով է, առանձնապես ծանր վիճակի մեջ է պրոլետարիատը, իսկ ձեր ոգնությունը մեծ բան էր մեզ համար»

— Նեմեցներն ել են գրում սրանց: Համա հետաքրքիր է, հա: Հենց գիտենաս հասակ առած մարդիկ լինեն: Յես հենց եյի իմանում, թե յերեխայական խաղեր են, հենց ենպես իրենց համար գրոշակներով քայլում են գաշտերում, յերգեր են ասում, իսկ սրանք, տես ինչ... Մենք ել կասենք ապրեցինք, սրանք ել բան չտեսանք, բան չիմացանք: Ասում են աղջիկներն ել են ուզում եսպես պիտներական խումբ կազմակերպել:

Սերգեյը տերտեր սերգեյը տերտեր,  
Սերգեյը տիրացու, ինքն ել սարկավազ,

Մըղըսին Սերգեևիչ,  
Ժամհարը Սերգեևիչ:

Վողջ գյուղը Սերգեևներ,  
Կոմիտեերնի կոմյերիտներն  
Առսում են եսպես...

Զվարճանում են: Նորեն յերգեցին, կլոր պար բռնեցին մինչև յերեկո: Իսկ յերեկոյան քայլերգով ուղեկցեցին Վասյային մինչև գետակի կամուրջը: Նորեն մտրակեց սայլապանը իր ձին, վեր վեր թռավ սայլակը, և յերկար ժամանակ կանգնած՝ տղաները թափահարում էին ձեռքերը և կանչում խմբով. «Մեզ չը-մո-ու-նանս... դը-լի-ր...»



## ԴԵՊԻ ՏՈՒՆ

Թրախկ-թրըխկ... Թրախկ-թրըխկ... յերգում, վագում են անիվները: Կողքով վագում են դաշտեր, անտառներ, գյուղեր:

Մնաս բարև, գյուղ: Վաղը—Մոսկվա: Լավ է, ուրախ է: Գրպանում թուղթ ունի,-- «Ընկեր Գլադովին է պատկանում մեր խուլ գյուղում, պիոներական խմբակ կազմակերպելու գործը: Նա մեր գյուղում առաջ բերեց գիտակցորեն ապրելու միտքը: Մեր գյուղն այժմ կենդանացել է: Պիոներական ակումբը ոջախն է մեր յերեխաների. պիոներական դրոշակը փարոս է, վորին ձգտում է մատաղ գյուղը: Ռ. Կ. Կ-ն և Կոմյերիտմիության բջիջները հայտնում են իրենց շնորհակալությունը ընկեր Գլադովին: Թող շատ լինեն այդպիսի ընկերներ: Յեկեք, արթնացրեք, կատարեցեք մեծ գործը:


Ռ. Կ. Կ. բջիջի քարտուղար՝ Ֆոմին.

Կոմյերիտմիության բջիջի քարտուղար՝ Սամոնին»: Լավ է: Ուրախ է: Իզուր չկորավ յերկու ամիսը: Ինչ վոր հարկավոր եր՝ բոլորն արավ: Ամոթով չի մտնի իր հարազատ ողակը:

Յերգում, վագում են անիվները. անտառները, միջանտառակները, դաշտերը, գյուղերը-վագում, փախչում են:

Ներհում է Վասյան և նրան յերևում է Լիբկնեխտի նկարով կարմիր տոմսը, և իբր թե անիվները փսփսում են. —

«Տաս-նև-չորս-տա-րե-կան կոմ-յերի-տա-կան-տոմս... տաս-նև-չորս-տա-րե-կան կոմ-յերի-տա-կան-տոմս»:



ԳԻՆԸ՝ 30 ԿՈՊ.

Հասցեն.— Գանձութիւնայա № 11 «Арменторг», Գ. Մալման.

ՀՀ Ազգային գրադարան



NL0191569

